

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Էլեկտրոնային ուսուցումը ուսուցում է նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

ԾՐԱԳԻՐ

Էլեկտրոնային ուսուցմանն անցնելու նպատակով իրականացվելիք միջոցառումների

2015-2020թ

Անհրաժեշտություն

1. Ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների կենսագործում
2. Մշակել էլեկտրոնային ուսուցման ռազմավարություն, որպես ամփոփ փաստաթուղթ,
3. Ձևակերպել էլեկտրոնային ուսուցման ռազմավարության հստակ նպատակներն ու խնդիրները, մշակել դրանց իրականացման ընթացակարգ,
4. Ստեղծել էլեկտրոնային ուսուցման կազմակերպման անհրաժեշտ գործիքակազմ և մեթոդաբանություն,
5. Կոմպլեկտավորել ռազմավարական ծրագրի համապատասխան նպատակներն իրականացնող թիրախային խմբեր,
6. Ստեղծել էլեկտրոնային ուսուցմանը նպաստող ներքին օրենսդրական նորմեր և կանոններ,
7. Ապահովել ուսուցման բնագավառում նոր տեխնոլոգիաների կիրառում,
8. Համալսարանն ապահովել անխափան ու հզոր ինտերնետ կապով,
9. Էլեկտրոնային ուսուցման ծրագրի ստեղծում,
10. Ուսուցման արդյունավետության և կրթության որակի շարունակական բարելավում,
11. Դասախոսների և ուսանողների համատեղ առցանց շփման ապահովում, դեմադեմ շփումից անցում կատարել առցանց շփման,
12. Առաջավոր բուհերի համանուն ծրագրի կիրարկման փորձի ուսումնասիրում և արմատավորում: Համատեղ կապերի ու համագործակցության ստեղծում /Պետական կառավարման ակադեմիա, Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան, Հայաստանի ազգային ագրարային համալսարան/,
13. Էլեկտրոնային ուսուցման փորձնական անցում / մագիստրոսական կրթական որոշ ծրագրերով/,
14. Էլեկտրոնային ուսուցման անցում բակալավրիատի կրթական ծրագրերով,
15. Էլեկտրոնային ուսուցման բնագավառի շարունակական բարելավում և ընդլայնում:
16. Բարելավել և առավել հասանելի դարձնել Համալսարանի կողմից մատուցվող ծառայությունները հասարակության լայն խավերի համար/ ներքին և արտաքին շահակիցների համար/:

Ծրագրի նպատակներ.

1. Դասախոսների և ուսանողների վերապատրաստման կազմակերպում :
 - Էլեկտրոնային ուսուցման գաղտնիքների բացահայտումը,
 - Էլեկտրոնային ծրագրի կիրառությանը նրանց մասնակից դարձնելը
 - Էլեկտրոնային ուսուցման առավելությունների հետ նրանց ծանոթացնելը:
2. Դասախոսների և ուսանողների մոտ էլեկտրոնային ուսուցման ծրագրի հիմնական գործիքներից օգտվելու կարողությունների և հմտությունների ձևավորում:
3. Աստիճանաբար ընդլայնել կրթական ծրագրերի իրականացման օգտատերերի դաշտը/ դասախոսներ, ուսանողներ, ներքին և արտաքին շահակիցներ/, ավելի մեծ թվով դասախոսների և ուսանողների հնարավորություն տալ էլեկտրոնային հարթակում ուսուցում կազմակերպմանը մասնակից դառնալու համար:
4. Համալսարանում ձևավորել ու ապահովել էլեկտրոնային կրթությանն անցնելու բավարար բարոյահոգեբանական միջավայր և մթնոլորտ:
5. Համալսարանի անփնակազմին հասանելի դարձնել էլեկտրոնային ուսուցման առավելությունները.
 - Տարածության հաղթահարումը
 - Ժամանակի խնայողությունը
 - Ինֆորմացիայի անձին նպատակահարմար ձևով և ժամանակին հասանելիությունը
 - Ուսուցման ընթացքում ընկալողի օրգանիզմի բիոռիթմի ապահովումը
 - Միանգամից մեկից ավելի մասնագիտություններով սովորելու հնարավորությունը
 - և այլն:
6. Ամենօրյա հետևողական աշխատանքի շնորհիվ ուսանողներին և դասախոսներին բերել այն համոզմանը, որ առանց էլեկտրոնային ուսուցում արագ փոփոխվող աշխարհում անհնար է արդյունավետ կրթություն կազմակերպել առանց նոր տեխնոլոգիաների կիրառման:
7. Ուսանողության և դասախոսական կազմին մոտիվացնել էլեկտրոնային ուսումնական հանդեպ: Բարձրացնել նրանց ոչ միայն տեխնիկական, այլև հոգեբանական պատրաստվածությունը:
 - Էլեկտրոնային ուսուցմամբ իրականացվող կրթության օգտակարության մասին, ինչի շնորհիվ ուսանողները նյութը յուրացնում են առանց մեծ

ջանքեր գործադրելու և առանց ավելորդ լարվածության, իսկ դասախոսները ավտոմատ կկարողանան կառավարել դասընթացը:

- Նորովի են իրականացվելու հարցումների, ուսանողներին գնահատելու գործընթացները:

7.1 Կրթական գործընթացը դառնում է հետաքրքիր՝

- մատչելի,
- թափանցիկ,
- ճկուն

անկախ ժամանակից ու տարածությունից

Առաջնահերթ աշխատանքներ և ժամկետներ.

Ա) Կատարված են

1. Համալսարանում կահավորել կառավարման կենտրոն բուհի տարբեր օղակների հետ էլեկտոնային կապն ապահովելու համար- 2015թ փետրվար/ :
2. Կառավարման կենտոնը կահավորել անհրաժեշ տեխնիկական միջոցներով՝ էլեկտրոնային գրատախտակ, համակարգչային սարքավորումներ, պրոյեկցիոն սարք, կապի այլ միջոցներ, ցուցադրական գրատախտակ, միկրոֆոններ—2015թ առաջին եռամսյակ:
3. Բուհի դասախոսներին և ուսանողությանը հորդորել ունենալու էլեկտոնային հասցե, օգնել նրանց միմյանց և բուհի ղեկավարության հետ էլեկտրոնային կապի մեջ մտնելու գործում: Մասնավորապես նրանց շրջանում լուսաբանել վեբ կայքի և էլեկտոնային հասցեի գաղտնիքները, դրանցից օգտվելու, միմյանց հետ գործարար շփումներ ապահովելու և ինֆորմացիայի փոխանակման կարողություններ ապահովելու համար- 2015թ ապրիլ, մայիս:
4. Հրավիրել խմբային խորհրդակցություններ աշխատակազմի, դասախոսական և ուսանողական կազմերի համար կառավարման կենտրոնի դերի, նշանակության և կենտրոնի հետ անհրաժեշտ կապեր ստեղծելու կարողությունների ձևավորման նպատակով – 2015թ հունիս:
5. Համալսարանի բոլոր օղակների և ուսանողության համար կազմակերպել ուսուցողական դասընթացներ էլեկտրոնային ուսուցմանը նրանց նախապատրաստելու, առաջման շփման առանձնահատկությունների հետ նրանց ծանոթացնելու և գործնական կարողությունների ապահովելու նպատակով, տեղի և հրավիրված հատուկ մասնագետների ուժերով-2015թ սեպտեմբեր, հոկտեմբեր:
6. Թարմացնել համալսարանի ստորաբաժինների տեխնիկական միջոցները և ապահովել անխափան ինտերնետ կապով- 2016 առաջին եռամսյակ:

Բ) ԸՆԹԱՑԻԿ

7. Ստեղծել էլեկտրոնային կապի ներքին ցանց -2016թ երրորդ եռամսյակ/ բուհի ղեկավարություն/:
8. Էլեկտրոնային ծրագրային համակարգի ներդնում -- 2016թ երկրորդ եռամսյակ :
9. Էլեկտրոնային ուսուցման ծրագրի ստեղծում, կառավարման հարթակի ձևավորում -- 2017թ առաջին եռամսյակ:
10. Էլեկտրոնային ուսուցման համար անհրաժեշտ միջավայրի և նորմատիվային դաշտի ստեղծում— ընթացքում սկսած 2017թ-ից:
11. Համալսարանի տեխնիկայի վերազինում նոր տեխնոլոգիական միջոցներով և ուսուցողական նյութերով / համակարգչային նոր տեխնիկա, լատեստողական և հաղորդիչ սարքեր, մեթոդական ձեռնարկներ և ուղեցույցներ/- ընթացքում սկսած 2017թ-ից:
12. Համալսարանի վեբ կայքի վերազինում և պարբերաբար թարմացում նոր տեղեկատվությամբ և նյութերով – 2017թ և հետագա տարիներին, ամիսը մեկ անգամ:
13. Անձնակազմի ուսուցողական դասընթացների և վերապատրաստման գործի կազմակերպում-2017-18 ուսումնական տարվանից և պարբերաբար:
14. Առաջավոր փորձի ուսումնասիրում, արմատավորում և սեփական փորձի կուտակում- 2017թ վականից:
15. Էլեկտրոնային ծրագրով մագիստրոսական կրթական ընտրովի դասընթացներով ուսուցման փորձնական կազմակերպում-2017-18 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից:
16. Մագիստրոսական կրթական ծրագրերում էլեկտրոնային ուսուցման կազմակերպում-2018-19 ուսումնական տարվանից:
17. Բակալավրիատի կրթական ծրագրերում էլեկտրոնային ուսուցման կազմակերպում—2019-20 ուսումնական տարվանից:
18. Սույն ծրագրի իրականացման համար պլանավորված աշխատանքները կատարելու համար նախատեսել մինչև 4 մլն դրամ: Իսկ ծրագրի հետագա անխափան գործունեության համար՝ տարեկան մինչև 2մլն դրամ:

19. Կազմել նախահաշիվ հատկացված միջոցների նպատակային ծախսման և խնայողությունն ապահովելու նպատակով:
20. Պարբերաբար անցկացնել մոնիթորինգ ծրագրի գործունեության, միջոցների և սարքավորումների պահպանության և ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումը վերահսկելու նպատակով:
21. Պահել մեկ հաստիքային աշխատող բուհի վեբ կայքի անխափան գործունեությունը և կառավարման կենտրոնի աշխատանքերը կազմակերպելու համար: Նրա համար սահմանել մինչև 100 հազար դրամի աշխատավարձ:

Համալսարանի ռեկտոր՝

Ա.Ս.ԱՂԱԲԱԲՅԱՆ

Աշխատանքների պատասխանատու
Ա.Պետրոսյան, հեռ-091201665
arampetros48@mail.ru

Էլեկտրոնային ուսուցման առավելություններից է.

«հեռավար ուսուցում» հասկացությունը. կյանքի է կոչվում տարածության մեջ ուսուցման գաղափարը:

Ուսուցման էլեկտրոնային միջոցների օգտագործումը նկատելիորեն ազդում է կրթական համակարգերի վրա և նպաստավոր պայմաններ է ստեղծում ուսուցման իննովացիոն մեթոդների զարգացման համար:

Էլեկտրոնային ուսուցման հիմնախնդիրը տեղեկատվական կրթական միջավայրի ստեղծումն ու արդյունավետ օգտագործում է: Այդպիսի միջավայրի մշակման և կիրառման խնդրի լուծման մեջ, ըստ դիդակտիկական տեսանկյունի, առկա են հետևյալ հիմնական կողմերը՝

§ ուսանողների ինքնուրույն գործունեության կազմակերպումը,

§ դասավանդողների կողմից յուրաքանչյուր ուսանողին ուսումնական գործունեության իրականացման համար անհատական աջակցության կազմակերպումը,

§ ուսանողների խմբային ուսումնական գործունեության կազմակերպումը (բանավեճ, նախագծի համատեղ մշակում և այլն):

Էլեկտրոնային ուսուցման կարևոր հիմնախնդիրներից է դասավանդողի կողմից յուրաքանչյուր ուսանողին ուսումնական գործունեության ընթացքում անհատական աջակցության կազմակերպումը:

Էլեկտրոնային ուսուցմամբ գործնականում իրականանում է անհատական մոտեցում, որը, անտարակույս, նրա առավելությունն է ուսուցման ավանդական ձևերի համեմատությամբ: Դա ուսումնական նյութի անհատական ընկալման, ընտրության հնարավորությունն է, նրա յուրացման ժամանակահատվածի անհատական բաշխումը, նյութի յուրացման արագության կարգավորումը՝ ըստ ուսանողի ընդունակությունների և հնարավորությունների: Անհատական ուսուցումը դասավանդողին ազատում է ուսումնական տեղեկատվության փոխանցման և այդ տեղեկատվության յուրացման ստուգման հնացած ձևերից՝ հոգուտ յուրաքանչյուր ուսանողի հետ անհատական համագործակցության: Ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիական միջոցները դասավանդողի և ուսանողի փոխազդեցությունը դարձնում են օպերատիվ, արդյունավետ, հարմար և հոգեբանորեն մատչելի: Այնուհանդերձ նշենք, որ անհատական ուսուցման իրականացման գործընթացում չեն ձևավորվում ուսումնական պարապմունքների

խմբային ձևերի կազմակերպման ժամանակ ձևավորվող հատկանիշներ՝ հաղորդակցական կարողություններ, թիմում աշխատելու կարողություններ, փոխօգնություն, աջակցություն, հանդուրժողականություն, համակեցություն, խմբի համար պատասխանատվություն կրելու կարողություն և այլն: